

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՎՐՑԱԽՈՒՄ  
XVII Դ. ԵՐԿՐՈՌԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿՁԲԻՆ\*

Մարինե Հարությունյան

Թանալի բառեր՝ Գյուլիստան, Արցախ, Շոշ, Տող, տապանաքար, խաչքար, եկեղեցի, քանդակագործություն, ձեռագիր, արձանագրություն:

Հայկական արվեստի կարևոր և հատկանշական բնագավառներից է քանդակագործությունը: Քննարկվող շրջանում արկա են եղել քանդակագործության երկու ենթատեսակներ՝ բոլորաքանդակ (երբ ստեղծագործությունը մշակվում է բոլոր կողմերից և դիտելի է բոլոր կողմերից) և ռելիեֆ (երբ քանդակային պատկերը փորագրվում է, կամ մեծ թե փորք ծևաչափերով կերտվում է նրա ֆոնը համդիսացող հարթության վրա և դիտելի է միայն դիմացից, մասամբ կողքերից):

Քանդակագործության արվեստի մի շարք փայլուն օրինակներ են՝ XVII-XVIII դդ. Արցախում կառուցված եկեղեցիների արտաքին պատերի, ճակուռների, մուտքերի, պատուհանների շրջանակների ու գոտիների, զանգակատների, թմբուկների վրա արված գեղաքանդակները: Ուշագրավ են Գյուլիստանի[1] (Սր. Ամենավիրկի վանք[2], 1641 թ.), Դրախտիկի (Սր. Գրիգոր Նարեկացի եկեղեցի[3], 1645 թ.), Թողանի[4], Խաչակապի (նաև Խաչակիակ, Դուշչի, թաղակապ եկեղեցին կառուցվել է 1650 թ. [5]), Ավետարանցի (Սր. Աստվածածին եկեղեցի[6], 1651 թ.), Խաչմաշի (Սր. Սուեկանոսի թաղակապ եկեղեցի[7], 1651 թ.), Շոշի (Սր. Սուեկանոսի եկեղեցի[8], 1655 թ.), Վարանոյի Հերեհը գյուղի (Սր. Գրիգորի եկեղեցի[9], 1667-1676 թթ.), Արաշաձոր գյուղի (Սր. Աստվածածին եկեղեցի[10], 1668 թ.), Պտկաթաղի (1670 թ. [11]), Ղազանչի (Սր. Գևորգ եկեղեցի, 1671 թ.), Խանձք գյուղի եկեղեցի[12], 1673 թ.), Վարդաշենի (նաև Միրզիկ, Սր. Գարբրիել եկեղեցի[13], 1674 թ.), Հակի (ԼՂՀ Քաջարադի շրջանում, 1675 թ.), Բերդաշենի (նաև Ղզղպա, ԼՂՀ Մարտունու շրջանում, Սր. Նահատակ եկեղեցի, 1676 թ.), Մարտունաշենի (նաև Ղարաբուլաղ, Արցախի հյուսիսային հատվածում, ներկայում Արդբեջանի Խանլարի շրջանում, Սր. Աստվածածին եկեղեցի, 1675 թ. [14], 1676 թ. [15]), Գետաշենի (Սր. Նահատակ կամ Ավագ Սր. Նշան եկեղեցի [16], 1677 թ.), Կուսապատի (Սր. Աստվածածին եկեղեցի[17], 1686 թ.) և այլ վայրերի եկեղեցիների տարբեր հատվածներում արված հարդարանքները: Հիշատակության արժանի է Երից Մանկանց վանքի եկեղեցու քանդակաշարը: Բազմաթիվ և գեղեցիկ քանդակների մեջ աչքի է ընկնում արկի ժամացույցը քարի վրա կերտված[18]: Իր հնատիպ քանդակաշարով առանձնանում է Եղիշա վանքի եկեղեցին, որի պատերի մեջ տեղադրվել են գեղեցիկ խաչքարեր, կենցաղային և այլ տեսակի հետաքրքիր զարդաքանդակներ, նոյնիսկ գերեզմանաքարեր, որոնց վրա քանդակված են երկրագործական գործիքներ, վար ու ցանքի, հացահատիկի կալսման տեսարաններ, խաղողի ողկույզներ և այլն[19]:

Քանդակագործության մեջ հատուկ ենթախումբ են կազմում տարբեր ժամրերի մանրաքանդակները («մանր պլաստիկա», «փոքր ծների քանդակագործություն»): Մանր պլաստիկայի առանձնահատուկ բնագավառին են պատկանում ուկերչական քանդակավոր կերտվածքներն: Այս տեսակետից ուշագրավ են բազմաթիվ ձեռագրե-

\* Հոդվածն ընդունվել է 25.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հասրաթյան:

## ՄԵՐՈՐԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րում արված զարդամուտիվները: Զեռագրերի կազմերի վրա առկա են բազմաթիվ զարդաքանդակներ՝ կիսագնդիկներ, անկյունային և եղրային մետաղապատումներ, կողային պատվածքներ, արծաթյա խաչ, արծաթյա զարդաքանդակ, խաչելությամբ, Տիրամոր դիմաքանդակով և այլն: Հարկ է նշել, որ մետաղապատ մասն են կազմում կափշները կամ նրանց մասերը՝ կոճակ, ամրակ կամ փականակ, զանազան տեսակի շղթաներ, կարտուշներ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, եղրածողներ կամ անկյունային պատվածքները[20]: Հատկանշական են Մատենադարանի N 3196 (Գանձակ, Քարահատ, 1655), N 3994 (Գանձակ, Հերցանկիս, 1683) ծեռագրերի կազմերը: Արագինի կազմը մետաղազարդ տախտակ է «Տերունական» նկարով (յատիներեն մակագրությամբ) և «Խաչելության» բազմաֆիգուր ու դիմամիկ քանդակով, երկրորդի կազմի վրա պատկերված է ականակուր արծաթյա խաչ:

N 5636 (Գանձակ, Քարահատ, 1676 թ.) ծեռագիրն արծաթ-ոսկեջրած կազմով է՝ ոսկեջրած զարդաքանդակներով: Կազմի վրա Տիրամոր վեհաշուրք ֆիգուրն է՝ Մանուկը ծեռքին: Բարձրաքանդակ ծավալածներով այդ աշխատանքն աչքի է ընկնում համամասնությունների անթերի մեկնաբանությամբ: Այս կազմի երկրորդ փեղկի վրա <<Խաչելության>> փայլուն կերտվածքն է:

Իրենց ինքնասիա մանրաքանդակներով աչքի են ընկնում Մատենադարանի N 6746 (Ղաստիվուր, 1671-1673 թթ.), N 6771 (Գանձակ, Գուլլար, 1667թ.) ծեռագիր-մատյանների կազմերն: Արագինի կազմը՝ կոստողապատ է՝ ականակուր խաչով, երկրորդինը՝ արծաթյա զարդաքանդակ է՝ կրկնակազմով, խաչելությամբ, «Տիրամոր» դիմաքանդակով: Ուշագրավ է N 7840 (Խանածախ, 1693 թ.) ծեռագիր կազմը, որն արծաթապատ է: Վերջինիս վրա պատկերված են «Տերունական» քանդակներ, որոնք ունեցել են սրբապատկերային նշանակություն: Բարձրաքանդակային սահուն հնարներով ցույց են տրված կերպարների դժվարին շարժումները: Տպավորիչ են հատկապես ֆոնի և ֆիգուրների հիմքանչ համադրությունը:

Մայր զարդաքանդակների փայլուն օրինակներ են ծեռագիր-մատյանների լրոշմազարդ[21], շերտազարդ[22] և վանդակազարդ[23] կտավները: Գեղարվեստական հարդարանքներով է զարդարված N 10660 ծեռ. (Գանձակ, Քարահատ, 1691 թ.), որի կտավը ժաղկազարդ է:

Ինչպես վերն ընդգծվեց քանդակագործության բնագավառում իր ուրույն տեղն է ունեցել զարդարվեստը: Զարդարվեստը հայկական արվեստի հնագույն ճյուղերից մեկն է, որը ծևավորվել էր յեռևս նախնադարում: Զարդարվեստի մոտիվները տարաբնույթ են: Ա. Մնացականյանը, հանգամանորեն ներկայացնելով զարդարվեստի մոտիվների ծագման ու զաղափարական բովանդակության հետ առնչվող հարցերի մեկնաբանությունը, նշում է, որ, հնագույն ժամանակներից սկսած, մարդիկ զարդարել են հագուստները, բնակարանները, տնային կահ-կարասին, գործիքները, մարդկային մարմինները, ծեռագրերն ու գրքերը, պատմաճարտարապետական զանազան հուշարձանները, գերեզմանաքարերը, նույնիսկ անասունների մարմինները, ծածկոցները և այլն[24]: Հայկական զարդարվեստում կարևոր մաս են կազմում բուսական և կենդանական մոտիվները:

Զարդաքանդակի մոտիվներն արտացոլվել են նաև տապանաքարերի վրա: Մեծ, տափակ, սպիտակավուն տեսակներից են Տող գյուղի Պետրոս Պապի[25] (1649 թ.) Մելիքսեթ Եպիսկոպոսի[26] (Ձրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքում, 1651 թ.), Աղուանից Գրիգոր կաթողիկոսի[27] (Գանձասարի վանքում, 1653 թ.), Ծարի պր.ն Զհանգիր բեկի (1676 թ.), Մելիքսեթ Եպիսկոպոսի պագ Եղբոր՝ Մելիքի[28] (Ձրվշտիկ, 1713 թ.), Զհանգիր բեկի կողակից Շայամի[29] (Ծարում, 1717 թ.) տապանաքարերը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Իրենց ինքնատիպ պատկերաքանդակներով առանձնանում են Գետաշենում գտնված տապանաքարերը. Պետովի տապանաքարն (1643 թ.) օրորոցածն է, հարավային կողին նվազածու և պարող: Մյուսը մեծ, թամբածն է, հարավային երեսին հեծյալ սուրբ ծեռքին, սանծից բռնած պատանի: Պատկերված է պարող մի ծեռքին գավ, մյուսին՝ բլիթ, երկու մարդ, շրջանակներին հինգ սուրբ. «Սուրբ խաչ բարիխոս Հայնագարին, կողակից Նանաին, որդի Եավիին, Հարութիւնին : ՈՃԱ: (1652)»[30]:

Հիշատակության արժանի է Փարաջանց գյուղում (Խաչինի շրջան) գտնված տապանաքարը (1658 թ.), որն օրորոցածն է. հյուսիսային երեսին կենցաղային տեսարան, վերկի թեքության վրա փորագրված արձանագրություն, արևմտյան ճակատին խարուկ, որից վեր միայն թվականը [31]:

Զարդաքանդակի գեղեցիկ նմուշ է Երեմիա կաթողիկոսի տապանաքարը: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայածն զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Երեմիա կաթողիկոսին Աղուանից, յազգէն Զալալ Դոլին»: ՈՃԽՄ : (1700) թուին[32]: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Սելքիսեր Եայսկոպոսի եղբոր Սեպորի (Ձրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքում, 1713 թ.), մելիք Եզանի հոր Գոշավանքի վանահայր Դուկաս վարդապետի տապանաքարերը (Տող գյուղի սր. Հովհաննես Եկեղեցում): Վերջինին տապանաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան տէր Սիմեոնի տապանաքարերի վրա: Վերջինին վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան տէր Սիմեոնի որդի Սեպոր վարդապետին, թվին ՈՃՀԲ (1723): Լուսահոգի մելիք Եկանն ծերնադրել տվաւ Եայսկոպոս, կարգեց Կտիչոյ վանքին առաջնորդ: Որ Եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՈՃՂԶ - ին (1747), ով որ կարդայ, մէկ բերան Աստուած ողորմի ասէ»[33]:

Գեղեցիկ քանդակներ են արվել մելիք Բեգի (նաև՝ Պեկի) կողակից Շայամինի[34] (Ծար-Զար գյուղի Սր. Սարգիս կոչվող թաղածածկ մատուռի մերձակայքում, ԼՂՀ Քարվաճարի, նախկին՝ Թյալբաջարի շրջան, 1717 թ.), Խոճա Եվլիմի[35] (Հին Սոխիրաթաղ գյուղում, Սարտակերտի շրջան, 1720 թ.), առաջաձորցի տէր Գրիգորի (1722 թ.), Սեսորաց վարդապետի որդի տէր Սիմեոնի տապանաքարերի վրա: Վերջինին վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան տէր Սիմեոնի որդի Սեպոր վարդապետին, թվին ՈՃՀԲ (1723): Լուսահոգի մելիք Եկանն ծերնադրել տվաւ Եայսկոպոս, կարգեց Կտիչոյ վանքին առաջնորդ: Որ Եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՈՃՂԶ - ին (1747), ով որ կարդայ, մէկ բերան Աստուած ողորմի ասէ»[36]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նմանատիպ տապանաքարեր են տեղադրվել Գանձասարում (Սինաս վարդապետի, 1724 թ.), Հացի գյուղի մատուռում (Խմիշի որդու Սարգիսի[37], 1725 թ., ԼՂՀ Սարտուռու շրջան):

Իր գեղագիտական քանդակաշարով աչքի է ընկնում Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Զալայանցի տապանաքարը՝ 1728 թ.: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայածն զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Եսայի կաթողիկոսին Աղուանից: Որ Եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՈՃՂԶ - ին (1747), ով որ կարդայ, մէկ բերան Աստուած ողորմի ասէ»[38]:

Հետաքրքրի զարդարվեստի մոտիվներ առկա են Սելիք Շահնազարի տապանաքարի վրա (Ավետարանոցում): Այն սպիտակավուն է: Տապանաքարի մեկ երեսին պատկերված է սագ նվազող, դիմացը՝ երեք պարողներ, երկու ֆիգուր. մեկի ծեռքին՝ հայելանման իր, իսկ մյուսին՝ կենաց ծառ: Մյուս երեսին՝ երեք հեծյալ և մի թամբած ծի, որի վրա պատկերված է թռչուն: Տապանաքարի վրա գրված արձանագրությունը օղակածն է. «Այս է տապան մելիք Շահնազարի որդի մելիք Ֆիսէհն, թվ: ՈՃԶԵ: (1736): Ունեմ գրանս գովեսգի ի վերայ մելիք Հուսէյնի, զօր գրեցի այս տապանի....»[39]:

Քամուկագործության արվեստի գեղեցիկ նմուշներ են Արցախի Եկեղեցիների

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

շրջակայքում կանգնեցրած խաչքարերը: Լինելով ժամանակաշրջանի գեղարվեստական մտածելակերպի ինքնատիպ մարմնավորում՝ խաչքարերն[40] իրենց մեջ համարում են բոլոր տեսակի թեմատիկ և գաղափարական խնդիրները՝ ոճական և արտահայտչական կոնկրետ ծևերով, որոնք կապված են պատմական գարգացման ընթացքի, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գեղարվեստական ձաշակի, կերտող Վարպետների անհատականության և այլ գործուների հետ:

Խաչքարային արվեստի ծևաչափերը նոր շրջանում դրսևորվում են նոր սկզբունքներով՝ իրենց մեջ պահպանելով ավանդական մեթոդների նրբությունները: Խնչպես նշում է Հ. Պետրոսյանը, 15-րդ դարի վերջից ծևավորվում է հորինվածքային մի կայուն հիմնածն, որը դառնում է գերակշիր և հարատևում մինչև 18-րդ դարի 20-ական թվականները: Քանդակագրում պահպան տեսակետից այն համարում է բազմախսացությունն ու սայի համակ զարդապատումը, պարզ հյուսվածքը, ուղղանկյուն սեզմենտներն ու բազմաթիվ աստղերը: Քանդակը դառնում է մակերեսային, ելնավոր գիծն ավելի է լայնանում և տափակում, ինչը ողջ հորինվածքին որոշակի հարթատեսքություն է հաղորդում [41]:

Իրենց հետաքրքիր գեղաքանդակներով առանձնանում են Սուլրունիսի եկեղեցու բակում (Թօդան գյուղում, 1639 թ.), Ծոշ գյուղի սր. Սուեֆանոսի եկեղեցու (1651 թ., 1655 թ., 1712 թ.)[42], Ճարտար գյուղի Եղիշե Կուսի անապատի(1654 թ.)[43], Զրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքերի շրջակայքում (1642 թ.[44], 1728 թ. [45]), Սր. Սիմաս Եկեղեցու[46] բակում (1681 թ.)[47]. Գտշա վանքի բակում (Կանգնեցվել է տողեցի Սարգսի որդի Սայունու և նրա կնոջ՝ Հերիքնազի կողմից, 1717 թ. [48]), Գիշի գյուղում (1723 թ.)[49] և այլ վայրերում տեղադրված խաչքարերը: Վերջիններիս հմայքը զարդամուխվաների ու համամասնությունների ներդաշնակության մեջ է:

Խաչքարային արվեստի արժեքավոր նմուշ է Ներքին Շենք գերեզմանատան հին մասում տեղադրված խաչքարը, որի վրա փորագրված արձանագրությունից երևում է, որ այն կանգնեցվել է 1641 թ.[50]: Այն ունի ուշագրավ սյուժետային զարդաքանդակներ. պատկերված է ծի, բամբի վրա՝ թրչուն, առջևում՝ մարդկային երկու պատկերներ և այլն [51]: Խաչքարային գեղեցիկ հարդարանքներ են եկեղեցիների ճակտոնները: Այս առումով հետաքրքիր է Երից Սանկանց եկեղեցու ճակտոնները, որոնք հարդարված են գեղեցիկ բանդակագար խաչքարերով[52]:

Այսպիսով՝ 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարի սկզբին Արցախում քանդակագրությունը շարունակել է զարգանալ՝ չնայած պատմաքաղաքական աննպաստ զարգացումներին: Ուսումնասիրությունը կարևորվում է այն առումով, որ քննարկվող հուշարձանների մի մասը գտնվում է Աղբեջանի կողմից բռնազարթած տարածքներում:

## ԾԱԾԿԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տարածքը հայտնի է դեռևս վաղ անցյալից: X դարից սկսած՝ այն մտել էր հզորացող Խաչենի իշխանության կազմի մեջ, իսկ XVII-XVIII դդ.՝ Գյուլիստանի մելիքության: Գյուղից 3 կմ հեռավորության վրա, սեպածն ժայռաբլրի վրա, գտնվում է Գյուլիստանի բերդը, որը 1632 թ. Սելիք Բեգլար Ա վերանորոգել է: Այստեղից էլ առաջացել է համանուն գյուղը (տե՛ս Հակոբյան թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, հ.1, էջ 906):
2. Տե՛ս Լալայան Ե., Նշանավոր վանքեր, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1899,

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2017

- գիրք Ե (№ 1), էջ 348:
3. Բարիխուտարեանց Ս., Արցախ, Բաքու, 1895, էջ 88: Տե՛ս նաև Ղիվան հայ Վիմագրության, պր. 5 (Արցախ), Եր., 1982, էջ 172: <http://www.monuments.nkr.am/index.php?al=home&act=filter&mtype=12>
  4. Ալիշան Ղ., Արցախ, Եր., 1993, էջ 106: Տե՛ս նաև Զալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփիսիս, 1842, էջ 210:
  5. Նոր Դար, Թիֆլիս, 1886, 6 մայիսի (N 65.), էջ 1:
  6. Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 148: Տե՛ս նաև Հարությունյան Վ., Հայ Ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 401:
  7. Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 159:
  8. Նոյն տեղում, էջ 145-146:
  9. Բարիխուտարեանց Ս., Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Թիֆլիս, 1901, էջ 170 -174: Տե՛ս նաև Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 164: Զալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփիսիս, 1858, էջ 317:
  10. Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 87: Տե՛ս նաև Զալալեանց Ս., նշվ. աշխ., մասն Բ, էջ 240-241:
  11. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 402:
  12. Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք (1653-1678թթ), Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, N 1, էջ 96:
  13. Տեղադրված է Արցախի հյուսիսային հատվածում՝ Գանձակից մոտ 20 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս գտնվում է Աղբեջանի Հանրապետության Խանլարի շրջանում (Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Եր., 2004, էջ 394-396: Խալայան Ե., Հայոց նշանավոր գյուղեր, Ազգագրական հանդես, 1899, N 5, էջ 315: Տե՛ս նաև Արձագանք, 1886, N 20, 25 մայիսի, էջ 295):
  14. Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 378:
  15. Ղիվան հայ Վիմագրություն, պր. 5, էջ 239:
  16. Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 321:
  17. Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 93: Զալալեանց Ս., նշվ. աշխ., էջ 180:
  18. Տե՛ս Մկրտչյան Ը., Լեռնային Ղարաբաղի պատմա-Ճարտարապետական հուշարձանները, Եր., 1980, էջ 53:
  19. Տե՛ս Մկրտչյան Ը., Մարտունու շրջանի պատմական հուշարձանները, էջմիածին, 1976, N 6, էջ 63:
  20. Մանրամասն տե՛ս, Մատենադարանի արժաքապատ կազմերով ձեռագրերը, Եր., 2011:
  21. Տե՛ս ՍՍ, ձեռ. N 223, N 713, N 2067, N 2277, N 3541, N 3542, N 3647, N 4228, N 4281, N 5072, N 5143, N 8678, N 9043 :
  22. Տե՛ս ՍՍ, ձեռ. N 968, N 4053, N 7980, N 8549 :
  23. Տե՛ս ՍՍ, ձեռ. N 6746, N 7687, N 10472:
  24. Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական գարդարվեստ, Երևան, 1955, էջ 7:
  25. Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 179:
  26. Նոյն տեղում, էջ 108:
  27. Բարիխուտարեանց Ս., Արցախ, էջ 176: Տե՛ս նաև Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 66:
  28. Ղիվան հայ Վիմագրության, պր. 5, էջ 110:

## **ՄԵՄՐՈԴ ՄԱՀԾՏՎ ՀԱՍԱԼԱՄԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2017**

29. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 406: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 222:
30. Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 236:
31. Նոյն տեղում, էջ, 196:
32. Նոյն տեղում, էջ 65: Տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 176:
33. Նոյն տեղում, էջ 178: Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 75:
34. Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 222:
35. Նոյն տեղում, էջ 94:
36. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 82: Տե՛ս նաև Ս. Զալալեանց, նշվ. աշխ., մասն Բ, էջ 258: Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 185:
37. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 127:
38. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 176: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 64:
39. Տե՛ս Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 49: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 149:
40. Այս մասին մանրամասն տե՛ս Հայկական խաչքարեր, Եր., 1973:
41. Պետրոսյան Հ., Խաչքար (ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը), Եր., 2008, էջ 203:
42. Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 146:
43. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 116:
44. Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 109:
45. Նոյն տեղում, էջ 111:
46. Տեղադրված էր պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի Կողթ զավառում: Ներկայումն՝ Աղրբեջանի Խանլարի շրջանում:
47. Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 232:
48. Զալալեանց Մ., նշվ. աշխ., մասն Բ, էջ 258: Տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 82:
49. Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 159:
50. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, Գիրք Ա, Եր., 1993, էջ 77:
51. Նոյն տեղում:
52. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 400:

### **ԱՄՓՈՓՍԱԳԻՐ**

**Քանդակագործությունն Արցախում XVII դ. Երկրորդ կեսին և XVIII դ. սկզբին  
Մարինե Հարությունյան**

Հոդվածում որոշակի պատկերացում է տրվում XVII դ. Երկրորդ կեսին և XVIII դ. սկզբին Արցախում քանդակագործության զարգացման վերաբերյալ: Նպատակն է՝ Մատենադարանի ձեռագրերի, պատմագիտական գրականության հիման վրա ևս մեկ անգամ ընդգծել պատմական այն ճշնարսությունը, որը, չնայած պատմական բարդ ժամանակաշրջանին, Արցախում մշակույթի տարբեր ճյուղերի կողքին քանդակագործությունը շարունակել էր առաջնարաց ապրել:

Հոդվածը կարևորվում է նաև նրանով, որ կասկածի տակ էր դրվում Աղրբեջանի կողմից բռնազավթված տարածքների ճարտարապետական կոթողների հայկականությունը:

**РЕЗЮМЕ**  
**Скульптура в Арцахе в XVII-XVIII вв.**  
**Марине Арутюнян**

**Ключевые слова:** Гюлистан, Божий, распятие, надгробие, хачкар, церковь Св. Григория Нарекаци, церковь Св. Минас, Монастырь Гтча, деревня Гиши.

В статье дается определенное представление о прогрессе скульптуры в Арцахе в XVII-XVIII вв. Цель - на основании рукописей Матенадарана, материалов, опубликованных в периодической прессе и литературе, еще раз подчеркнуть ту историческую правду, что, несмотря на сложный исторический период, скульптура, наряду с разными отраслями культуры в Арцахе, продолжала переживать определенное возрождение, что тесно было связано с другими отраслями культуры.

Одной из задач является—на основании фактических материалов показать, что вышеуказанные культурные ценные экземпляры были созданы в Арцахе, и несомненно, армянские. Речь идет об архитектурных монументах северной части Арцаха, которые в настоящее время находятся на территориях, оккупированных Азербайджаном, и которые квалифицируются ихими.

**SUMMARY**  
**The Sculpture in Artsakh in XVII - XVIII centuries**  
**Marine Harutyunyan**

**Keywords:** *Gulistan, divine, crucifix, gravestone, khachkar, St. Grigor Narekatsi Church, St. Minas Church, Gatcha monastery, Gishi village.*

The article gives a clear idea about the progress of sculpture in Artsakh in the XVII - XVIII centuries. The aim of the article is to emphasize the historical truth that despite the difficult historical period, sculpture continued to develop in Artsakh alongside with other cultural branches. This is being proved through manuscripts of the Matenadararan, materials of periodical press and literature.

On the basis of factual material it becomes possible to show that these valuable cultural samples were created in Artsakh and are certainly considered to be Armenian. This refers to the architectural monuments of the northern part of Artsakh, which are currently on the territories occupied by Azerbaijan and qualified as theirs.